## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Համայնքի 2023 թվականի բյուջեն մշակվել է հիմք ընդունելով համայնքի զարգացման 2021-26 թվականների հնգամյա ծրագիրը: Համայնքի բյուջեն սեփական եկամուտների հավաքագրման, պետության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքին տրվող դոտացիայի արդյունքում ստացված եկամուտների հաշվին նպատակաուղղված է համայնքի զարգացման քառամյա նախատեսված ծրագրային գործողությունների իրականացմանը: Նոյեմբերյան համայնքի 2023 թվականի բյուջեն ուղղված է համայնքի բնակչության բարեկեցության բարձրացմանը, սոցիալապես անապահով խավերի կենցաղային պայմանների բարելավմանը, մշակութային և մարզական կյանքի աշխուժացմանը, գրոսաշրջության համար գրավիչ պայմանների ստեղծմանը:*

Համայնքի 2023 թվականի բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշգրտելով անշարժ գույքի հարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները:
- Աջակցել ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների աշխատանքների արդյունավետության բարձրացմանը և բնակիչների ակտիվ ներգրավմանը մասնակցային կառավարման գործընթացներում:
- Իրականացնել համայնքի ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման գործունեության արդյունավետ կազմակերպում:
- Բարձրացնել բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող համայնքային ծառայությունների և այլ լրացուցիչ ծառայությունների մակարդակն ու որակը:
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:
- Աջակցություն ցուցաբերել և իրականացնել միջոցառումներ համայնքի բնակչության՝ խոցելի խմբերին, բազմազավակ ընտանիքներին, հաշմանդամներին ֆինանսական կամ նյութական օգնություն տրամադրելու գործում:
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային, կոմունալ տնտեսության բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում, ավելացնել փողոցային լուսավորությունը:
- Խթանել համայնքում հաշմանդամություն ունեցող և խոցելի խմբերի համար ծրագրերի իրականացմանը:
- Իրականացնել օրենքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ՝ պաշտպանության և արտակարգ իրավիճակների պայմաններում գործողություններ իրականացնելու ոլորտում:

Համայնքի 2023 թվականի զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական մակարդակի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքում հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքում գենդերային հավասարությանը:

Որպես Նոյեմբերյան խոշորացված համայնքի ղեկավար, ես ամենայն պատասխանատվությամբ եմ մոտենում բյուջեի նախագծի կատարմանը և վերահսկմանը, նույն պատասխանատվությամբ էլ դիմում եմ համայնքի բնակիչներին,ավագանու անդամներին,համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝
շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2023 թվականի բյուջեի միջոցների գոյացմանը, դրանց նպատակային օգտագործմանը, բյուջեի կատարմանը և վերահսկմանը:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՍԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ